

## «Ֆինանսների նախարարություն»

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/6

18 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ 21.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքի կիրառման դեմ:

#### **«Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Առաջնորդվելով «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ-ն 2014 թ-ի ընթացքում աշխատել է շրջանառության հարկով հարկման ռեժիմում, պարտաճանաչ կատարել է տվյալ հարկման ռեժիմից բխող բոլոր հաշվարկները և վճարել բոլոր հարկերը:

15.10.2014 թ-ին ստացված գրությամբ կազմակերպությունը տեղեկացվել է, որ պետք է առաջնորդվեր «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.4-րդ կետի «բ» ենթակետով, ըստ որի չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող, քանի որ «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 100 տոկոս փայաբաժնի փայատեր Գուրգեն Ղազարյանը ունի իր անունով գրանցված Ա/Ձ, որի գործունեությունը, սակայն, դադարեցված է:

Գրությանը համապատասխան կազմակերպությունը ներկայացրել է ԱԱՀ-ի հաշվարկներ առաջինից երրորդ եռամսյակների համար և վճարել է առաջացած պարտավորությունն ու այն ժամանակին չվճարելու համար առաջացած տույժերը:

Այս իրավիճակի հետ կապված «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ-ին առաջադրվել է նաև տուգանք համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի, որը բավականին մեծ գումար է կազմում և կազմակերպությանը դնում է շատ ծանր ֆինանսական դրության մեջ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գուրգեն Ղազարյան ԱՁ-ի գործունեությունը դադարեցված է և, հետևաբար, 2014 թ-ի ընթացքում ոչ մի եկամուտ չի ստացել, առաջացած իրավիճակը կապված է թյուրիմացաբար սխալ հարկային ռեժիմի կիրառման հետ, այլ ոչ թե միտումնավոր հաշվարկները չներկայացնելու և հարկերը չվճարելու հետ, ինչպես նաև այն, որ կազմակերպությունն իր գործունեության ընթացքում պարտաճանաչ կերպով ներկայացնում է բոլոր տեսակի հաշվետվություններն ու կատարում բոլոր հարկային պարտավորությունների վճարումները, երբևէ չի ունեցել ժամկետանց պարտավորություն պետական բյուջեի նկատմամբ, «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ-ն խնդրում է ընդառաջել և չկիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ-ի կողմից 2014 թ-ի 1-3-րդ եռամսյակների համար ներկայացվել են շրջանառության հարկի հաշվարկներ:

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ-ն, ուսումնասիրելով տեղեկատվական բազայում առկա տվյալները պարզել է, որ «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 100 տոկոս փայաբաժնի փայատեր Գուրգեն Ղազարյանը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի ա) ենթակետի դրույթներով Կենտրոնի ՀՏ կողմից «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ-ին տեղեկացվել է, որ վերջինս չի կարող համարվել

շրջանառության հարկ վճարող: Արդյունքում, կազմակերպության կողմից ներկայացվել են ԱԱՀ-ի հաշվարկներ և վճարվել են դրանցում արտացոլված պարտավորությունները:

«ՖՆ Կենտրոնի ՀՏ-ն, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկել է նույն հոդվածով նախատեսված տուգանքը, որը կազմել է 1.794.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված է շրջանառության հարկ վճարողների շրջանակը: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող են համարվում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող ՀՀ ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները (այսուհետ՝ անձինք):

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի ա) ենթակետի համաձայն. «Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝

4) առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, եթե՝

...

ա. առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձին, ... »:

Տվյալ դեպքում «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ-ի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ՝ Գուրգեն Ղազարյանին: Ընդ որում հարկ է նշել, որ անհատ ձեռնարկատերի կողմից փաստացի գործունեություն իրականացնելու (եկամուտ ստանալու) պայման օրենքը չի նախատեսել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ-ի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Գ.Ղազարյան և որդիներ» ՍՊԸ 21.10.2014 թ-ի գանգատը՝ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքի կիրառման վերաբերյալ, մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

